«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ - ՄԱՐՏՈՒՆԻ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

ԴԱՍՎԱՐ - ԱԼՎԻՆԱ ԵՐԻՑՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ - ԴԱՍՎԱՐ 5-ՐԴ ԽՈՒՄԲ

ՂԵԿԱՎԱՐ- ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն_____էջ 3
2. Ներառական կրթության արդիականությունը, նպատակը և խնդիրները:

3. Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները_____էջ 3-5
4. Ներառական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում_____էջ 5-7
5. Ներառական կրթության հիմնախնդիրները_____էջ 7-8
6. Ներառական կրթության հոգեբանամանկավարժական խնդիրները____էջ 8-11
7. Ներառական կրթության տեխնոլոգիաներ_____էջ 11-15
8. Եզրակացություն_____էջ 16
9. Առաջարկություն _____ էջ 17
10. Գրականություն_____էջ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնահարցի արդիականությունը- Այսօր, արդեն ողջ աշխարհում, ներառական կրթությունը համարվում է մի գործընթաց, որն անմիջապես արձագանքում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավելով և ընդլայնելով նրանց մասնակցությունը կրթական գործընթացին : Ներառումը արժեքային համակարգ է, ըստ որի բոլոր երեխաներն ունեն կրթության հասանելիության հավասարաչափ իրավունք կրթության բոլոր մակարդակներում:

Նպատակը- Յուրաքանչյուր երեխայի համար ապահովել սովորելու և փոխադարձ հարգանքի այնպիսի միջավայր, որտեղ երեխան անկախ իր հաշմանդամության, սոցիալական, կրոնական և սեռի պատկանելիությունից իրեն զգա ինքնավստահ, հավատա իր կարողություններին և բարձրացնի իր ինքնագնահատականը: Երեխաների մոտ ձևավորել այնպիսի վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և արմատավորել այն գիտակցումը, որ նրանք նույնպես հասարակության լիիրավ անդամներ են:

Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար:

Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների աղբյուր հանդիսանալ,որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման մեթոդներ՝ ապահովելով մեծ թվով մասնակիցների ընդգրկվածությունըուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները:

Խնդիրները- 1.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ պետք է աշխատի տարբեր մասնագետներից կազմված թիմը՝ անկախ երեխաների թվից և կրթության առանձնահատուկ կարիքների բնույթից (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ) և այլ: Իրականում նման ամբողջական թիմ չի հավաքվում:

2.Բացի ուսուցիչներին ներառական կրթության վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ տրամադրելուց, կարևոր են նաև մասնագիտական գիտելիքների զարգացումը: Աշխատելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ՝ հաճախ առաջանում են հարցեր, որոնց պատասխանները ուսուցիչները չունեն:

3. Դպրոցներում (ինչպես և հասարակության մի ստվար հատվածի մոտ) դեռ կա խտրական և կարծրատիպային վերաբերմունք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները

Այսօր աշխարհում ապրում է մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ կես միլիոն մարդ: Նրանցից շատերը հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից:

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ:

Ներառումը ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթությունը, տարիների ընթացքում ուսումնասիրելով հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքները, կանգնել է որոշակի հարթության վրա:

Երեխաները սովորում են տարբեր արագությամբ, յուրաքանչյուր երեխա ինքնին յուրատիպ է, ուստի ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացը ճիշտ ապահովելու համար: Եվ բոլորովին պարտադիր չէ, որ յուրաքանչուր ուսուցիչ ունենա հատուկ մանկավարժական կրթություն. պարզապես հարկավոր է իրականացնել հասկանալի, մատչելի դասավանդում և, ամենակարևորը՝ դրսևորել համբերատարություն: Սա այն է, ինչ պահանջվում է բոլոր ուսուցիչներից:

Ներառումը կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:

Ներառումը մոտեցում է, որի դեպքում պետք է հաշվի առնել աշակերտների բազմազանությունը, որի ժամանակ պետք է փոխվի ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցնելով նրանց ընդունակություններին: Այդ ժամանակ ուսուցիչները պետք է իրենց փորձն ու գիտելիքները ներդնեն հանուն աշակերտի գիտելիքի: Մանկավարժները պետք է հարմարվեն երեխաների հետաքրքրություններին ու կարիքներին , եթե ունենան ճկուն դասացուցակ, ծնողների հետ անհատական աշխատանք,կազմակերպել համատեղ արտադասարանական

գործունեություն: Մանակավարժը պետք է հավատա ուսումնական գործընթացի հաջողությանը: Բոլոր աշակերտներից ՝ անկախ նրանց առանձնահատկություններից, պետք է բարձր ակնկալիքներ ունենա:

Մենք ուսուցիչներս, լինելու ենք հետևողական, համբերատար և հարգանքով ենք վերաբերվելու յուրաքանչյուր երեխայի ուսուցման անհատական ոճին: Կարծում եմ , որ նման մոտեցում դրսևորելով մենք կունենանք դրական արդյունքներ:

Օրենսդրական բարեփոխումների շնորհիվ՝դպրոցներում կրթությունը կազմակերպվելու է ոչ միայն սովորական աշակերտների, այլեւ համապատասխան առողջական խնդիրներ ունեցող երեխաների համար, ինչը նրանց հնարավորություն կտա լիարժեք կերպով ինտեգրվել հասարակության մեջ:

Ներառական համակարգը շատ ճիշտ բան է նմանատիպ երեխաների համար, որովհետեւ իրենք անպայման շահեկան դերում են լինում: Ցանկացած սովորողի հետ, երբ տարվում է անհատական աշխատանք, անպայման արդյունք է լինում, իսկ արդեն դասարաններում, մեծ է ուսուցչի դերը, որոնց հետ էլ համապատասխան աշխատանք են տանում:

Ներառական կրթության ներդրումը ենթադրում է, որ այսուհետ հանրապետության դպրոցները պետք է հարմարեցվեն հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին, որպեսզի նրանք հնարավորություն ունենան սովորական աշակերտների հետ դասերի հաճախել: Հայաստանում այսօր գործում է շուրջ 107 ներառական դպրոց: Ամեն տարի դրանց թիվն ավելանում է 15-ով: Համակարգի ներդրումը, սակայն, հարթ ճանապարհով չի անցել: Հիմնական խնդիրներից մեկը հասարակության, հատկապես ծնողների հոգեբանական պատրաստվածության հարցն է:

3 տարի առաջ, կային ծնողներ, ովքեր խնդրում էին խնդիրներով երեխային իրենց երեխայի կողքը չնստեցնել, որ իրենց երեխան լինի դասարանում, որտեղ խնդիրներով երեխաներ չկան, բայց պետք է ասեմ, որ այսօր ավելանում է այն ծնողների թիվը, ովքեր տանը հատուկ աշխատանք են տանում իրենց երեխաների հետ՝ սովորեցնելով նրանց, որ խնդիր ունեցող երեխան իրենց ընկերն է:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանի

հանրապետությունում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար» [1]: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, «պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով» [2]: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համակարգված պրոֆեսիոնալ աջակցություն ցուցաբերելու գիտակցությամբ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ 2001թ.-ին առաջինը Հայաստանում սկսեց ներառական կրթության ծրագիրը:

Այսօր արդեն ներառական կրթության «Հույսի կամուրջի» փորձը դարձավ այն հիմքը,

որի վրա երկրում մշակվեցին ներառական կրթության քաղաքականությունը, օրենքը և ռազմավարությունը: Հայաստանում 2005թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին » ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում: Սա նշանակում է, որ կրթական այս ձևը իրավական հիմք ստացավ և այն կառավարելու է պետությունը:

Ներառական կրթությունն կրթական քաղաքականության մաս է և կշարունակվի Հայաստանի Հանրապետությունում, բնականաբար՝ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության շարունակական գործուն մասնակցությամբ:

Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց: Ներառական կրթությունը մշակվում է ավելի ճկուն մոտեցմամբ, որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին, և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան: Հայաստանը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

Հայաստանի տարածքում առկա 1464 դպրոցներից միայն 260-ն են պաշտոնապես համարվում ներառական կրթություն իրականացնող: Սա կազմում է առկա դպրոցների 18 տոկոսը: Այս դպրոցների մեծ մասը Երևանում են: Մինչդեռ Ազգային

վիճակագրական ծառայության (ԱՎԾ) համաձայն, 2016թ. դրությամբ Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 8016 մարդ: 2012թ. ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտարարել էր, որ այլևս գոյություն չեն ունենալու ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող դպրոցներ: Այսինքն, Հայաստանում գործող բոլոր հանրակրթական դպրոցները մինչև 2025թ. պետք է դառնան ներառական, հասանելի և մատչելի լինեն բոլոր երեխաների համար: Ըստ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության, Հայաստանում գործում է ոչ թե ներառական, այլ ինտեգրված կրթություն: Այսինքն, ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում: Ուսուցիչները բավարար ժամանակ չեն տրամադրում երեխայի հետ աշխատանքին: Թույլ է ծնողների հետ համագործակցությունը: Հասարակության մի հատվածը կարծրատիպային վերաբերմունք է դրսևորում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բացակայում են տարրական պայմանները հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Դպրոցները չունեն մատչելի թեքահարթակներ, սանհանգույցներ, ինչպես նաև համապատասխան մասնագետ-ուսուցիչներ: Ենթակառուցվածքի բացակայության, մանկավարժական անձնակազմին չվստահելու, հասարակության կարծրատիպային մոտեցման պատճառով ծնողների մի մասը ձգտում է երեխային թաքցնել շրջապատից, չուղարկել դպրոցական կրթության: Ներառական կրթության առանձնահատկությունն այն է, որ կրթությունը պետք է հիմնվի բազմազանության վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կարիքները: Դպրոցը, իր հերթին, պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական գործընթացում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար: Իսկ պետական մակարդակով ներառական կրթության համար պետք են խորքային և երկարաժամկետ փոփոխություններ, դրանց իրականացմանն ուղղված աջակից կառույցներ և ռեսուրսներ, ինչպես օրինակ՝ ուսուցիչների, վարչական անձնակազմի, աշակերտների և ծնողների հատուկ կենտրոններ:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք

բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում: Ահա դրանք.

- երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց,
- մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների ուսուցմանը,
- բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն,
- ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,
- ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել: Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար:

Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերջին տարիներին մեր հանրապետությունում ներդրված է ներառական կրթության համակարգը: Այն ուղղված է ոչ միայն կարիքներով երեխաներին լիարժեք կապերով կրթության մեջ ընդգրկելուն, այլ նաև նրանց որպես հասարակության լիարժեք անդամ ընդունելու մոտեցումների և տեսակետների ձևավորմանն ու տարածմանը: Այսօր արդեն ներառական կրթական հաստատությունների թիվը մեծացել է՝ իր մեջ ներառելով կրթության առանձնահատուկ պայմանների ամենատարբեր կարիքներ ունեցող երեխաներին, և հնարավոր է դարձել վեր հանել այն խնդիրներն ու թերությունները, որոնք ծառացել են մանկավարժների, հոգեբանների և ծնողների առջև: Արդեն կարող ենք գնահատել այն մեծ ձեռքբերումները, որոնք շոշափելի են ինչպես հատուկ կարիքներով երեխաների, այնպես ել նրանց ընտանիքների համար:
Մի քանի միջազգային և ակտիվ գործող հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների շնորհիվ արձանագրվել է որոշակի առաջընթաց, որը արժանի է գնահատման: Սակայն առավել կարևոր է գիտակցել և ընդունել այն թերությունները, որոնք կան և շարունակում են մնալ ներառական կրթական հաստատություններում: Որպես արտաքին պայմաններ կարող ենք առանձնացնել կրթական հաստատության հնարավորություններն ու ուսումնանյութական հագեցվածության համապատասխանությունը՝ հատուկ կարիքներով երեխաներին ընդունելու համար: Սակայն կան նաև հոգեբանամանկավարժական խնդիրներ, որոնք կապված են թե՛ երեխաների կարողությունների, թե՛ ծնողների հնարավորությունների, և թե՛ հոգեբանամանկավարժական մթնոլորտի առկայության հետ:
Հասարակությունն ինքն է ընդունում նորմատիվ ցուցանիշներ այս կամ այն գնահատման համար և ինքն էլ ենթարկվում է դրանց: Տարիների ընթացքում բնական աղետների, տեսական փոփոխությունների, կրթական բարեփոխումների արդյունքում փոփոխվում և շարունակվում են փոփոխվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների թիվը: Համաշխարային փորձը, մասնավորապես Նոր Զելանդիայի և Շվեդիայի կրթության մոդելները անթույլատրելի են համարում մի շարք եզրույթների օգտագործումը: Այդ եզրույթներում բնութագրում են ոչ թե մարդուն, այլ նրա անկարողությունը: Ընդունելով, որ հատուկ կարիքը հիվանդության ախտահարման կամ անկարողության հետևանք է, ցուցաբերում են

բժշկական կամ սոցիալ-հոգեբանական, մանկավարժական մոտեցումներ: Ակնհայտ է, որ անկարողությունը կարող է վերածվել հաշմանդամության, եթե չկանխվի մեկուսացումը, սահմանափակվեն հաղորդակցվելու, տեղաշարժվելու հնարավորությունները, հուզական շփումները, այլ կերպ ասած՝ չսահմանափակվեն պիտանելիության և սիրո պահանջմունքները բավարարելու հնարավորությունները: Միայն այն դեպքերում, երբ երեխայի խնդիրը շատ ծանր է նույնիսկ բժշկական միջամտություններն անօգուտ են , դժվար է կանխատեսել նշանակալի դրական փոփոխություններ՝ ընդլայնելով հասարակության մեջ ներառելու հնարավորությունները:

Եթե փորձեք ներառական կրթության հիմնախնդրին մոտենալ պետական հովանավորության շրջանակներում, ապա ավելի հեշտ կլինի փնտրել ու գտնել առաջացած խնդիրների լուծումները: Ինչպես տարիներ առաջ, այսօր էլ նեռարական կրթության հիմքում ընկած է << Կրթություն բոլորի համար>> գործողությունների միջազգային ծրագրերը, որն իր մեջ կրում էր հետևյալ պահանջները.

1. Ուսումնական պահանջները պետռք է փոխվեն հասարակության պահանջներից ելնելով
2. Ուսուցիչը պետք է պատասխանատվություն կրի բոլոր երեխաների համար
3. Բոլոր երեխաները երբեմն-երբեմն կարող են ունենալ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք
4. Երեխաների հատուկ կարիքը չպետք է նրան զրկի այն կրթությունից, որը ստանում են այլ երեխաները
5. Հատուկ մանկավարժները ուսուցիչներ են, որոնք կարող են աշխատել ցանկացած երեխայի հետ
6. Երեխաները առարկայական գիտելիքները յուրացնում են իրենց իսկ հնարավորությունների շրջանակներում
7. Երեխաները սովորում են ավելի լավ, եթե բովանդակությունը հետաքրքիր է և քննարկվում է իրենց հետ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հոգեբանամանկավարժական դժվարությունները կարող ենք խմբավորել հետևյալ կետերով.

1. երեխայի մտավոր զարգացման մակարդակի և կրթական ծրագրի համապատասխանություն,
2. երեխայի հարաբերությունները այլ երեխաների հետ,
3. երեխայի ծնողի հարաբերությունները այլ երեխաների ծնողների հետ,
4. ծնողի հարաբերությունները մանկավարժների հետ ,
5. այլ ծնողների հարաբերությունները մանկավարժների հետ:

Առաջինը լուծվում է երեխայի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման ճանապարհով, գնահատման կենտրոններում, այլ կազմակերպություններում երեխայի հետազոտման միջոցով: Երկրորդ կետից սկսած՝ առնչվում ենք ծնողների և

մանկավարժների անձնային և մասնագիտական հասունության մակարդակի,կրթական հաստատությունում տիրող մթնոլորտի,սոցիալտնտեսական պայմանների հետ:
Երեխայի բժշկահոգեբանամանկավարժական գնահատմնհան համար կրառվում են երեք տարբեր մոդելներ՝ մուլտիդիսցիպլինար /բազմամասնագիտական/, ինտերդիսցիպլինար /ներմասնագիտական/ և տրանսդիսցիպլինար /միջմասնագիտական/:
Մուլտիդիսցիպլինար գնահատման հիմքում ընկած է առանձին մասնագետների կողմից կատարվող գնահատումը՝ յուրաքանչյուրն իր ուղղվածությամբ՝ բժիշկ, հոգեբան, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ և այլն: Արդյունքում կատարվում են ընդհանուր քննարկումներ, և եզրակացությունները տրվում են համապատասխանաբար յուրաքանչյուր մասնագետի կողմից: Այս դեպքում համագործակցումը միմյանց հետ կատարվում է միայն վերջում՝ հաշվետվությունները ներկայացնելու ժամանակ:
Գնահատման ներմասնագիտական մոդելը նախատեսում է համատեղ գնահատում, որտեղ տարբեր ուղղվածությամբ մասնագետները հետևում են մեկը մյուսի աշխատանքին, խորհրդակցում և տալիս են համատեղ գնահատական , առանց առաջնայնության:
Միջմասնագիտական մոդելը իրականացվում է երեխայի գործունեության ամբողջ ընթացքում: Օրինակ՝ հոգեբանը կարող է մասնակից լինել այս կամ այն մանկավարժի դասի ընթացքին, կատարել դիտարկումներ և տալ խորհուրդներ:
Մոդելներից ոչ մեկը չունի առավելություն. դրանց ընտրությունը պետք է համապատասխանի պետության կողմից տարվող քաղաքականությունը, կրթական բարեփոխումներին և հասարակության պահանջներին:
Երեխայի հոգեբանամանկավարժական գնահատման գործնթացը իր մեջ ներառում է հետևյալ քայլերը.

1. , գնահատումն իրականացվում է երեխայի հնարավորություններն հաշվի առնելով, Հարցազրույց ծնողների հետ,
2. Ծնողական հարցաթերթերի մշակում և լրացում,
3. Հարցազրույց դասավանդող ուսուցիչների հետ,
4. Ուսուցիչների թերթիկների մշակում և լրացում,
5. Երեխայի աշխատանքների արդյունքների գրանցում,
6. Համակարգված դիտումներ,
7. Այլ մասնագետների տվյալների գրանցում :

Ընդ որում գնահատումն իրականացվում է երեխայի հնարավորությունները հաշվի առնելով, գրանցելով ընթացիկ տվյալներ, հաշվի առնելով նույնիսկ ամենափոքր առաջընթացը, այլ ոչ թե համեմատելով որևէ սահմանի հետ:
Ներառական նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին երկու երեք տարվա ընթացիկ ցուցանիշներ: Դրանք կարող են լինել գրավոր և բանավոր խոսքի հետ կապված առաջադրանքների, տարբեր հմտությունների և ունակությունների ցուցանիշներ, որոնք պայմանավորված են երեխայի ընդհանուր տեղեկացվածության , հոգեկան և ֆիզիկակյան զարգացմամբ: Յուրորինակ արդյունք է , երբ երեխան ինքն իրեն գնահատում հաշվի առնելով իր հաջողություններն ու անհաջողությունները [5]:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ներառման պայմաններում ուսումնական գործընթացում տեխնոլոգիաների կիրառումը, ժամանակակից դիրքորոշումներից ելնելով, պահանջում է ոչ միայն կրթության բովանդակության և խնդիրների փոփոխություն և մի սերնդից մյուս սերնդին սոցիալական փորձի փոխանցում, այլև անձի զարգացման համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում:Ներառական կրթության պայմաններում դա նախ և առաջ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անձի պաշտպանվածության ապահովումն է,որը հնարավոր է իրականացնել բաց,ամբողջական,անհատական ուսուցման և սովորողների սոցիալացմանն ուղղված կրթական միջավայրում:

Ներառական կրթության տեխնոլոգիաները հիմնվում են հանրակրթության հայեցակարգերի հետևյալ դրույթների վրա:
Ամբողջականության սկզբունքի պահպանումը պահանջում է լրացուցիչ շտկողակրթական ծառայությունների կարիք ունեցող սովորողների յուրահատկությունների և հնարավորությունների ուսումնասիրում, մանկավարժության ու հոգեբանության զինանոցից վերցված բազմազան մեթոդների, հնարների ու միջոցների կիրառում:
Համակարգվածությունը ուսուցչից պահանջում է ոչ միայն ուսումնական ծրագրային նյութի յուրացման խնդիրների լուծում, այլև խմբում փոխհարաբերությունների բարելավման, խանգարված վարքի շտկման, յուրաքանչյուր սովորողի անձի ուժեղ կողմերի զարգացման համար ժամանակին միջոցների ձեռնարկում: Ներառական կրթության դասարանում անհրաժեշտ է համակարգված աշխատանքների միջոցով ստեղծել բարենպաստ պայմաններ բոլոր սովորողների իմացական ներուժային հնարավորությունների առավել լիարժեք իրագործման համար՝ հաշվի առնելով նրանց զարգացման յուրահատկությունները, որոնցով պայմանավորված են ուսուցման նպատակը և խնդիրները:
Կարևորվում է ուսուցման և դաստիարակության գործունեական բնույթը: Նշված մոտեցման համաձայն, իրական ներառում իրականացնելու հիմնական միջոցը սովորողների ակտիվ գործունեության հաջողված լինելն է: Միայն նման գործունեության միջոցով է հնարավոր մոդելավորել և վերարտադրել աշակերտների համար դժվար, բայց կյանքում առկա պայմանները, որոնց վերլուծությունը և խաղարկումը կարող են սովորողի անձի զարգացման դրական փոփոխությունների հիմք դառնալ:
Զարգացման տարբեր մակարդակ ունեցող երեխաների համար նշանակալի դեր ունի սոցիալական հարմարումը: Սովորողներն ընդգրկվում են նրանց առաջընթացին աջակցող սոցիալական փոխհարաբերությունների մեջ: Հարաբերությունների երկխոսական ձևը, ուսումնական գործընթացի մասնակիցների միջև

հաղորդակցական կապերը դառնում են մտավոր գործունեության փոփոխությունների արտաքին խթաններ և դրականորեն ազդում սովորողի զարգացման վրա։
Հայեցակարգային մոտեցում է ուսումնական գործընթացին սովորողի հուզական մասնակցությունը։ Սա նշանակումը է ուսումնական գործունեության հանդեպ ապրումների, զգացմունքների առաջացում։ Դրա հիմքում ընկած է այն գաղափարը, ըստ որի՝ ապրումները խթանում են ինտելեկտի զարգացումը, ընդ որում՝ հուզական խթանն առավել գործուն է, քան իմացականը։ Այդ երևույթը հատկապես ցայտուն է արտահայտված մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մեջ՝ պայմանավորված նրանց հուզական ոլորտի ավելի պահպանված լինելու հանգամանքով։
Արդիական է ուսուցման անհատական մոտեցումը, ինչը հնարավոր է դարձնում սովորողի տեղափոխումն ավելի ցածր մակարդակից՝ բարձր, կամ հակառակը, բարձրից՝ ցածր։ Անհատական մոտեցումը նպաստում է այս կամ այն առարկայից անհատական օգնության ցուցաբերմանը, հոգեկան առողջության բարելավմանը, զարգացման թերությունների շտկմանը։
Ներառական կրթության բնագավառում կարևորվում է կշռադատողական մտածողության օգտագործումը, որի հիմքը կազմում են ինքնագնահատումը, ինքնավերլուծումը, ինքնավերահսկումը, այսինքն՝ սեփական գործունեության մշտական կշռադատումը նվաճումների ու բացթողումների գնահատման միջոցով։ Կշռադատումը հնարավորություն է տալիս ապահովելու իրականացվող աշխատանքների հեռանկարայնությունը, ներառման գորրծընթացի մեջ բոլոր մասնակիցների՝ ուսումնական հաստատության ղեկավարների, ուսուցիչների, աշակերտների, ծնողների ներգրավումը։ Կշռադատումը թույլ է տալիս հետևել սովորողների նվաճումներին, տեսնել տվյալ փուլում սովորողի զարգացման թերությունները։
Տեխնոլոգիաները կրթական ներառման պայմաններում ունեն հետևյալ բնութագրիչները.
-Նախագծվում, ընտրվում է հոգեֆիզիկական յուրահատկություններով սովորողի կրթության բովանդակությունը։ Այն ազատվում է երկրորդական բաղադրիչներից։ Դա թեթևացնում է սովորողների բեռնվածությունը, հնարավորություն ընձեռում բազմակի անգամ անդրադառնալ ծրագրային նյութի գլխավոր և էական մասերին։
- Ներառման պայմաններում իրականացվում է կրթության հաղորդակցական բաղադրամասի ապահովումը։ Իսկ դա ենթադրում է կրթական գործընթացի մասնակիցների փոխգործունեություն, մեկը մյուսի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի առկայություն, սոցիալական փորձի փոխանակում։
- Օգտագործվում են տարբերակված կրթական ծրագրեր, որոշվում է սովորողի կրթական երթուղին՝ հաշվի առնելով մի շարք գործոններ։ Դրանցից են կենսամիջավայրը, ծնողների մանկավարժական կուլտուրան, սովորողների իմացական հնարավորությունները, ինչպես նաև օգտագործվող մեթոդական այն

հնարները, որոնց կիրառումը երաշխիք է՝ անձի զարգացման միջոց հանդիսացող կրթական միջավայրի ստեղծման համար։
Ներառական կրթական տեխնոլոգիաների յուրահատկությունն է՝ կրթական ընդունված համակարգերի և արտաքին միջավայրի հետ մշտական փոխգործունեության մեջ լինելը։ Դա հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն գնահատել յուրաքանչյուր փաստն ու երևույթը, ընդունել այլ մարդկանց աշխարհը, հայացքները, նախընտրությունները։
Ուսումնական գործընթացը կառուցվում է այնպես, որ դրա մասնակիցները կարողանան ուշադիր լսել միմյանց և ծանոթանալ տարբեր տեսակետների։ Ուսուցիչը և սովորողները չեն շտապում միանգամից գրանցել սխալ պատասխանները։ Յուրաքանչյուր սովորողի դիրքորոշումն ընդունվում է արժանավայել ձևով,այն քննարկվում և վերլուծվում է։ Սովորողները հասկանում են, որ իրենք ունեն նաև սխալվելու իրավունք։ Ուսումնական գործընթացը կառուցվում է այնպես, որ հնարավորինս կրճատվեն դասարանի ընդհանուր սովորողների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման մակարդակների միջև գոյություն ունեցող տարբերությունները, բացահայտվի և զարգանա յուրաքանչյուրի ներուժը, և հաշվառվեն նրանց յուրահատկությունները։ Տեխնոլոգիաների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն դրանց բովանդակությամբ, այլև կազմակերպական պայմաններով։ Դասարանը կամ այն տարածքը, որտեղ անցկացվում են պարապմունքները, պետք է լինեն հարմարավետ, ապահովեն պայմաններ ինքնուրույն խաղային գործունեության և մեկուսանալու համար. սովորողը ցանկության դեպքում պետք է խմբի անդամներից առանձնանալու հնարավորություն ունենա։ Այս դեպքերի համար նախատեսվում է առանձին սեղան՝ մանկական ամսագրերով, գրքերով և դիդակտիկ խաղերով։
Ներառման կրթական տեխնոլոգիաները լուծում են հետևյալ խնդիրները.
- Համատեղ ուսումնական գործունեության և շփման ընթացքում առաջացած դժվարությունների հաղթահարում և կանխարգելում։
- Հատուկ կարիքներով երեխաների սովորելու դժվարությունների, ճանաչողական ճգնաժամերի հաղթահարում,նրանց հուզական ոլորտի թերությունների մեղմում՝ ի հաշիվ մյուս երեխաների կողմից զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների խնդիրների գիտակցման։
- Հանդուրժողական մթնոլորտի ստեղծում, արժանապատվության զգացումի զարգացում,այլ մարդկանց հետ շփվել ցանկանալու ձգտում, ընկերություն անելու,այն պահպանելու գիտակցության կարևորում։
Ներառական ուսուցման պայմաններում կիրառվող տեխնոլոգիաները ենթադրում են ուսուցման փոխներգործուն մեթոդների օգտագործում և շփումների ակտիվացում։ Հաշվի են առնվում երեխաների կարիքները, նրանց անձնային յուրահատկությունները, զարգացման սոցիալական պայմանները։ Դպրոցում ուսուցումը մեկուսացումից առաջ է մղվում դեպի ներառում՝ սոցիալական

ներգործունեության շնորհիվ: Վերջինս էական է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կայացման իմաստով:
Ներառական կրթական տեխնոլոգիաները հիմնականում հենվում են էվրիստիկ հարցադրումների, գործնական խաղերի, ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման վրա: Այդ ընթացքում ուսուցիչը միաժամանակ ուշադրությունը կենտրոնացնում է հատուկ կարիքով սովորողների մտածողության՝ գործնական կողմնորոշմամբ սոցիալական ուղղվածության ձևավորման վրա: Աշակերտը պետք է լուծի գործնական կոնկրետ խնդիրներ և ճիշտ կառուցի իր հարաբերություններն այլ մարդկանց հետ: Դա պահանջում է դերային վարքի յուրացում և վիճակահարույց հարցերի քննարկման ժամանակ ճկունություն: Փոխգործունեությունը սովորողին հնարավորություն է տալիս ստանալու և իրացնելու կյանքի փաստերն ըմբռնելու և շրջապատի փոխհարաբերությունները դիտարկելու դիրքորոշում: Գիտակցաբար բախվում են անձնական և խմբային սոցիալական փորձը: Սովորողը ձեռք է բերում արժեքային կողմնորոշումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության մուտքը և զարգացումը մեր երկրում բխում է հասարակության պահանջներից, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական դժվարություններ ունեցող մարդկանց հասարակության լիարժեք անդամ դառնալու պահանջմունքից: Այդ գործընթացը հաճախ կապված է մի շարք խնդիրների հետ, որոնց արդյունավետ լուծումը և դրական փոփոխությունների երաշխավորումը պահանջում է «կրթել» հասարակությանը՝ աջակցման և համագործակցման նոր հեռանկարներ բացելով այն անձանց համար, ովքեր ունեն ապրելու, կրթվելու և զարգանալու առանձնահատուկ պայմանների անհրաժեշտություն: Ուստի պետք է սովորողին ներգրավել ուսումնական գործունեության մեջ, անձնավորել նրա աշխատանքի արդյունքները:

Ուսումնական գործունեության հանդեպ դրդապատճառի ձևավորման խնդիրը լուծվում է, եթե խրախուսում ենք ամենափոքր հաջողությունը: Ուշադրությունը պետք չէ կենտրոնացնել սովորողի անհաջողության վրա: Դասարանի առջև պետք է պահպանել սովորողի կարգավիճակը. « Դու դեռ ամբողջը չես արել, դեռևս կարող ես ինքնուրույն աշխատել: Մենք քեզ կօգնենք և դու շուտով ավելին կանես»: Տվյալ իրավիճակում ուսուցիչը ստեղծում է ուսումնական գործունեության իրականացման համար պայմաններ, նպատակամղում է սովորողի գործունեությունը: Միաժամանակ անհրաժեշտ է հրավիրել ծնողների ուշադրությունը հրավիրել երեխայի հաջողությունների վրա: Սովորողն իրեն լավ է զգում այն մտքից, որ իրեն քաջալերել են: Նման մոտեցման դեպքում սովորողը հոժարությամբ է գալիս դասարան: Բարձրանում է նրա սոցիալական ակտիվությունը, նախադրյալներ են ստեղծվում նաև ուսումնական ակտիվության համար:

Եվ իհարկե առաջնորդվում ենք այն կարգախոսով, որ ոչ ոք ապահովագրված չէ նման խնդրի առջև կանգնելուց, ուստի պիտի անենք հնարավոր ու անհնար ամեն բան ներառական կրթությունը էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

Առաջարկություն

● Բոլոր երեխաների կրթական կարիքների հավասար գնահատում պետք է լինի:

● Կրթական գործընթացի վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին:

● Երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջև առկա տարբերությունները դիտել ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող մոտեցում:

● Սեփական համայնքում կրթություն ստանալու բոլոր երեխաների իրավունքի հավասար պաշտպանություն և իհարկե ամենակարևորը հարգանք:

● Համայնքների դպրոցների պայմանների բարելավում:

● ՈՒսումնական գործընթացում առկա խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 05.07.1995 հոդված 39
2. «Կրթության մասին » ՀՀ օրենք, 14.04.1999, հոդված 6, կետ 6
3. Ընտանիք և դպրոց, 2.2016
4. Ա.Լ.Վարդանյան, Ա.Ա. Հովսեփյան, Ա.Խ.Մուրադյան «Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների սոցիալական հարմարումը և կրթական միջավայրում ներառումը», Երևան 2011
5. Հատուկ կրթության գիտամեթոդական տեղեկատու 3, Վ.Ա. Կատինյանի խմբագրությամբ, Երևան, Պոլիգրաֆբիզնես 2011